ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2018 թվականի N 62-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԱՐԾՎԱՆԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Արծվանիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համար անցկացված մրցույթին մասնակցած ՀՀ կրթության և գիտության նախարարի ներկայացուցչի եզրակացությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Չեղյալ ճանաչել ՀՀ Սյունիքի մարզի «Արծվանիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր տեղի համար 2018 թվականի հունիսի 15-ին անցկացված մրցույթի արդյունքները:

2. Առաջարկել ՀՀ Սյունիքի մարզի «Արծվանիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնին՝ խորհրդին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել տնօրենի ընտրության նոր մրցույթ:

25.06.2018

X

VERIFIED OCSP 25.06.2018 17:35:40 GMT+4

Подписано HAMBARDZUMYAN KAREN 2611820473

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ